ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 26-Ն
06 ՄԱՅԻՍԻ 2016թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 70-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի 2016 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 70-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1.Գործառական դասակարգման բաժին 09,խումբ 01,դաս 01(նախադպրոցական հիմնարկի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4267 (կենցաղային և հանրային սննդի նյութեր) հոդվածի <<2600.0>> թիվը փոխարինել <<2810.0>> թվով,4212 (Էներգետիկ ծառայություններ) հոդվածի <<735.0>> թիվը փոխարինել <<945.0>> թվով:

2.Գործառական դասակարգման բաժին 09,խումբ 02,դաս 01(հիմնական ընդհանուր կրթություն) և տնտեսագիտական դասակարգման 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածից 960.0 հազար դրամ հատկացնել Մարալիկի թիվ 1 միջնակարգ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ՄԱԿԱՐՅԱՆ ԲԱԲԿԵՆ

2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՍ

5. ՈՒՌՈՒՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

6. ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ք. Մարալիկ
06 մայիսի 2016թվական